



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 6
ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝
2023 Թ. ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ
Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների և թեզերի կատարման ընթացքը ամփոփում:
2. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունված նոր ծրագրերի և նախագծերի իրականացման հետ կապված հարցեր/զեկ.՝ Ն. Դիլբարյան/:
3. Մասնագիտական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
4. Հեռակա ուսուցմամբ ուսանողների հաճախումների վիճակը ֆակուլտետում/զեկ.՝ Վ. Եղիազարյան/:
5. Հայ նորագույն գրականության ամփոփնի հաշվետվությունը:
6. Հայցորդների ատեստավորում:
7. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ ամփոփումների վարիչները ներկայացրին ավարտական աշխատանքների և թեզերի կատարման ընթացքը՝ փաստելով, որ չունեն խնդրահարույց դեպքեր, ուսանողները և մագիստրոսները մշտական կապի մեջ են իրենց ղեկավարների և ամփոփումների հետ, և հույս հայտնեցին, որ բոլորն էլ ժամանակին կկարողանան ավարտել և հանձնել իրենց աշխատանքները:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյանին, ով ներկայացրեց ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունված նոր ծրագրերի և նախագծերի իրականացման ընթացքը ֆակուլտետում: Դոց. Ն. Դիլբարյանը գիտխորհրդի անդամներին հայտնեց, որ բոլոր ծրագրերի գծով պահանջվող ժամանակացույցերը կազմված և ուղարկված են, դրանք արդեն հաստատվել են, և ֆակուլտետը սպասում է հետագա քայլերին և հանձնարարականներին:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ մասնագիտական պրակտիկա ունեցող համապատասխան ամբիոնների վարիչները նշեցին, որ ուսանողների շրջանում պրակտիկայի ընթացքից դժգոհություններ չեն եղել, դեկավարներն էլ պարբերաբար հանդիպել են ուսանողներին:

Ելույթ ունեցողները նաև հույս հայտնեցին, որ արդյունավետ պրակտիկան էապես կնպաստի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ Բ. Գ. Թ., դոց. Վ. Եղիազարյանին, ով ներկայացրեց հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների հաճախումների վիճակը: Դոց. Վ. Եղիազարյանը փաստեց, որ հաճախումների վիճակը հեռու է բավարար լինելուց, բացակայությունների մեծ մասը պայմանավորված է ուսանողների աշխատանքի և ընտանեկան կարգավիճակի հարցերով, չնայած քիչ չեն նաև որևէ կերպ չբացատրվող բացակայությունները: Հեռակա բաժնում դասեր ունեցողները իրենց խոսքում ևս փաստեցին, որ բացակայությունները շատ են՝ առաջարկելով դեկանատին ավելի հետևողական գտնվել և անհարկի բացակայություններ ունեցող ուսանողների նկատմամբ ավելի խիստ և հետևողական լինել: Ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն էլ իր հերթին ավելացրեց, որ բացակայությունների մի մասն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ դասախոսներ շարունակում են քիչ ուշադրություն դարձնել ուսանողների հաճախումներին՝ հաճախ նաև չգրանցելով դրանք:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոց. Ս. Գրիգորյանին, ով ներկայացրեց ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Դոց. Ս. Գրիգորյանը իր խոսքում մասնավորապես նշեց.

Մեզ համար անցյալ տարվա գլխավոր իրադարձությունն այն էր, որ առայժմ հաջողվեց պահպանել ամբիոնի՝ որպես գիտամանկավարժական ինքնուրույն ստորաբաժանման գոյությունը: Այդ կապակցությամբ կատարվեց ամբիոնի հերթական

անվանափոխությունը. այն կոչվում է հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն:

Ժենյա Քալանթարյանի վերադարձից հետո ամբիոնում աշխատում են երեք պրոֆեսոր, չորս դոցենտ, որոնցից մեկը՝ համատեղությամբ, և մեկ լաբորանտ: Նրանք հիմնական և մասնագիտական դասընթացներ են վարում բակալավրիատում և մագիստրատուրայում, որոշ դասախոսներ՝ նաև ուրիշ ֆակուլտետներում: Ուսումնական գործընթացին զուգահեռ ամբիոնի աշխատակիցները շարունակել են նաև գիտահետազոտական աշխատանքները, մասնակցել գիտաժողովների, հրատարակել գրքեր և հոդվածներ:

Դոց. Լ. Մեյրանյանը հրատարակել է «Հայեցումներ բառերից անդին» հոդվածների ժողովածուն: ՀՈՒՖ հիմնադրամի հայտարարած մրցույթին են ներկայացվել պրոֆ. Ա. Ավագյանի «Հակոբ Մնձուրի. Տեմուրճենց Մեծ ընկուզենին» և դոց. Ս. Գրիգորյանի «Եղիշե Չարենցը և 20-րդ դարի հայ գրականությունը (Վահան Տեյրյան, Ավետիս Ահարոնյան)» մենագրությունները:

Ամբիոնի անդամները հաշվետու տարվա ընթացքում գիտական հանդեսներում, պարբերական մամուլում և ժողովածուներում հրատարակել են բազմաթիվ հոդվածներ: Պրոֆ. Ա. Ավագյանը տպագրել է «Հեղինակային ինքնադիմանկարը Հակոբ Մնձուրու երկու պատմվածքներում», «Երբ եղեգները կանգուն են» և «Դիմանկար գիտնականի մասին» հոդվածները, պրոֆ. Ժ. Քալանթարյանը՝ «Փոխադարձ սե՛ր, թե՛... (հոգեբանական վերլուծության փորձ)», ««Պատ» գրական խորհրդանիշի փիլիսոփայական հիմքը և իմաստային նրբերանգները», դոց. Ա. Արզումանյանը՝ «Քառաբաժան ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները» և ««T-աձև աղյուսակ» մեթոդական հնարի կիրառման առանձնահատկությունները», դոց. Լ. Մեյրանյանը՝ «Հակոբ Կարապենցի «Ադամի գիրքը» վեպի պատկերավորման համակարգը», «Ավանդույթի և նորի միջև սահմանայնության դրսևորումները Օրհան Փամուկի «Կարմրահեր կինը» վեպում», «Արշակ Չոպանյանի բանաստեղծական աշխարհը», «Աշխարհաթողության թեման Իսահակյանի երկերում» և «Ձախրատի բառերի աշխարհը», հայցորդ Մարինե Ղազարյանը՝ «Հակոբ Օշականի «Մահուան ծաղիկներ» շարքը որպես տեսական բանաձևումների գեղարվեստական շրջանակ» հոդվածները:

Ամբիոնի անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառումներին, հանդես եկել չարենցյան հրապարակումներով: Ա. Ավագյանը տպագրել է «Չարենցյան հետքերով (Էսսեի փոխարեն՝ գրված Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ)» էսսեն, Ժ. Քալանթարյանը՝ «Եղիշե Չարենցի «Կապկազ» թամաշայի արդիականությունը», Ս.

Գրիգորյանը՝ «Ամենտի եզերքը Եղիշե Չարենցի պոեզիայում և համաշխարհային գրականության մեջ», «Եղիշե Չարենցի «Մահվան տեսիլ» (1920) բանաստեղծությունը որպես պատմություն» և «Ինչո՞ւ էր Եղիշե Չարենցը սիրած աղջկան կոչում «քույր»» հոդվածները:

Նոյեմբերի վերջին ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Հայաստանի գրողների միության, Եղիշե Չարենցի տուն-թանգարանի և ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի միացյալ ուժերով կայացել է բանաստեղծի 125-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, որին զեկուցումներով մասնակցել են պրոֆ. Վ. Գաբրիելյանը («Չարենցը հետադարձության շրջանի պոեզիայում»), Ժ. Քալանթարյանը («Եղիշե Չարենցը Պողոս Մակինցյանի գնահատմամբ»), Ս. Գրիգորյանը («Եղիշե Չարենցի «Սոմա» պոեմը համաշխարհային գրականության համատեքստում»), Լ. Սեյրանյանը (««Ես իմ անուշ...»-ի ընթերցման նոր փորձ») և Ա. Արզումանյանը («Մինեսոթեզիան (համազգացողություն) բառի և ձայնի զեղաձևումների տիրույթում. Եղիշե Չարենց և Լյուդվիգ վան Բեթհովեն»): Այդ ուսումնասիրությունները առաջիկայում տեղ կգտնեն «Չարենցը և իր ժամանակաշրջանը» ժողովածուի մեջ:

2022 թվականը ամբիոնի համար առհասարակ արգասաբեր էր գիտակրթական միջոցառումների առումով:

Մայիսի 26-ին ամբիոնի ու Հայաստանի դանթեական կոմիտեի նախագահ Անահիտ Մկրյանի նախաձեռնությամբ և Հայաստանում Իտալիայի փոխդեսպանի մասնակցությամբ 4-րդ կուրսում անցկացվեց «Դանթեն և հայ գրականությունը» թեմայով բաց դաս, որի ընթացքում զեկուցումներով հանդես եկան ֆակուլտետի գրականության դասախոսներ Ս. Մուրադյանը և Ս. Գրիգորյանը, ինչպես նաև ուսանողներ Ս. Երիցյանը և Է. Նոնինյանը:

Տարին առատ էր գիտաժողովներով: Դրանցից մեկը տեղի ունեցավ ֆակուլտետում մայիսի 12-ին: Դա հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի համար ավանդական դարձած «Մաթևոսյանական ընթերցումներ» հանրապետական գիտական նստաշրջանի արդեն 4-րդ նիստն էր: Հանրապետության ուրիշ գրականագետների և գրողի որդու ելույթներից բացի՝ գիտաժողովին զեկուցումներով մասնակցեցին ամբիոնի անդամներ Վ. Գաբրիելյանը («Հրանտ Մաթևոսյանի Չարենցը»), Ժ. Քալանթարյանը («Մշակույթն իբրև ազգային գոյի բաղադրիչ՝ ըստ Հրանտ Մաթևոսյանի»), Ս. Գրիգորյանը («Հրանտ Մաթևոսյան և Էռնեստ Հեմինգուեյ»), Ա. Արզումանյանը («Գայլապատկերի խորհրդաբանության իմաստային հոսքերը. Հրանտ Մաթևոսյան և Հերման Հեսսե»), ինչպես նաև ամբիոնի մագիստրոսներ Հ. Հովակիմյանը և Ա. Թադևոսյանը: ԵՊՀ հրատարակչությունը

առանձին գրքով արդեն հրատարակել է «Մաթևոսյանական ընթերցումներ» 4-րդ ժողովածուն:

Սեպտեմբերի 23-ին Համազգային հայ կրթական և մշակութային միության և ՀՊՄՀ նախաձեռնությամբ կայացել է «Պոլսահայ գրականությունը 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը» համահայկական գիտաժողով, որին զեկուցումներով մասնակցել են նաև մեր ամբիոնի անդամները: Վ. Գաբրիելյանը ընթերցել է «Պոլիսը պոլսահայ բանաստեղծության մեջ», Ա. Ավագյանը՝ «Հակոբ Մնձուրու «Սուրբ Գեորգ» պատմվածքը», Լ. Սեյրանյանը՝ «Զահրատի ստեղծագործության կառուցվածքային-նշանագիտական ընթերցման փորձ», Մ. Ղազարյանը՝ «Տեղագրական պատկերները Հակոբ Մնձուրու արձակում» զեկուցումները:

Ամբիոնն իր մասնակցությունն է բերել նաև Վահագն Դավթյանի հոբելյանի միջոցառումներին: Նոյեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում կայացել է Վահագն Դավթյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով, որի կազմակերպիչներից մեկն էլ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետն էր: Գիտաժողովին զեկուցումներ են ընթերցել նաև ամբիոնի դասախոսները: Ժ. Քալանթարյանը ներկայացրել է «Վահագն Դավթյանի գրականագիտական հայացքները», Ս. Գրիգորյանը՝ «Հայ միջնադարյան թուղթը Վ. Դավթյանի «Թոնդրակեցիներ» պոեմի ժանրային կառուցվածքում», Լ. Սեյրանյանը՝ «Զորս տարրերի բնափիլիսոփայական լեզուն Դավթյանի տաղերում» հետազոտությունները:

Ամբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը «Վահագն Դավթյանի պոեմները» մենագրության համար արժանացել է Հայաստանի գրողների միության Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակին:

Ամբիոնն ուսումնական տարվա առաջին կիսամյակում անցկացրել է ֆակուլտետային թեմատիկ քննարկումներ: Պրոֆ. Ժ. Քալանթարյանը ներկայացրել է «Արվեստի ձևաբանության մի քանի հարցեր», ամբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը՝ «Եղիշե Չարենցը և համաշխարհային գրականությունը», իսկ Լ. Սեյրանյանը՝ «Ակսել Բակունցի «Ալախական մանուշակ» պատմվածքի գունապատկերային համակարգը» թեմաները:

Պրոֆ. Ա. Ավագյանն այս տարվա մարտի 23-25-ը Թբիլիսում մասնակցել է Հովհ. Թումանյանի մահվան 100-ամյակին նվիրված միջոցառումներին, որ կազմակերպել էին Հայաստանի և Վրաստանի մշակույթի նախարարությունները՝ Թումանյանի տուն-թանգարանի և հայ բանասիրության ֆակուլտետի համագործակցությամբ: Ավագյանը ելույթներով հանդես է եկել Խոջիվանքում, Թումանյանի տուն-թանգարանում և գրողին նվիրված ցուցահանդեսի բացմանը:

Այսպիսով՝ դասերը պարտաճանաչորեն և որակով անցկացնելուց բացի՝ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնը մեկ տարվա ընթացքում կատարել է գիտահետազոտական զգալի աշխատանք: Շարունակվել է նաև գիտական կադրերի պատրաստման գործը: Ամբիոնն ընդունել է նոր հայցորդ, որի ատենախոսության թեման հաստատվել է:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ ներս հրավիրվեցին հաշվետվություններ ներկայացնող հայցորդները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Գոհար Անուշավանի Պետրոսյանի ատեստավորման հարցը/թեկնածուական ատենախոսության թեման է «Հարություն Սըվաճյանի գրական ժառանգությունը»: Գիտական ղեկավարն է բան. գիտ. դոկ., պրոֆ. Ալ. Մակարյանը/:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում Գոհար Պետրոսյանը ուսումնասիրել է թեկնածուական ատենախոսությանը վերաբերող գիտական նյութերը, ինչպես նաև հանձնել է կրեդիտային համակարգով նախատեսված պարտադիր և կամընտրական առարկաների քննությունները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Գոհար Անուշավանի Պետրոսյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Արամ Աշոտի Խաչատրյանի ատեստավորման հարցը/թեկնածուական ատենախոսության թեման է «Գրական բանավեճերը ժամանակակից հայ մամուլում (1990-2010-ական թթ.)»: Գիտական ղեկավարն է բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը/:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում Արամ Խաչատրյանը մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների, հանձնել ստուգարքները: Ատենախոսության թեմայի հետ կապված ուսումնասիրում է տեսական նյութեր և գրական մամուլը: Պատրաստվում է հրատարակել երկու հոդված:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Արամ Աշոտի Խաչատրյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Արաքսյա Բաղդասարյանի ատեստավորման հարցը /ղեկավար՝ Վ. Պետրոսյան, թեմա՝ Հին հայերենի և արդի ռուսերենի հոլովական համակարգերը/:

Ա Ր Տ Ա Ն Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և ուրիշներ: Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում Արաքսյա Բաղդասարյանը իրականացրել է ծրագրով նախատեսված 32 կրեդիտի ապահովումը. պարտադիր մասնակցության առարկաներ՝ 12 կրեդիտ և ընտրովի մասնակցության առարկաներ՝ 20 կրեդիտ: Սկսել է թեմային առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրությունը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Արաքսյա Բաղդասարյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Հռիփսիմե Կոստանյանի ատեստավորման հարցը /ղեկավար՝ Վ. Պետրոսյան, թեմա՝ «Արդի գրական հայերենի և ռուսերենի գոյականական կարգերի զուգադրական քննություն»/:

Ա Ր Տ Ա Ն Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և ուրիշներ: Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում Հռիփսիմե Կոստանյանը մասնակցել է հետևյալ դասընթացներին՝ գիտական հետազոտությունների մեթոդաբանություն, մասնագիտական օտար լեզու, տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ, գիտության փիլիսոփայություն, հոգեբանություն, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում: Հանձնել է բոլոր ստուգարքները և կուտակել յուրաքանչյուրին համապատասխան կրեդիտների քանակը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Հռիփսիմե Կոստանյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Ասյա Դարբինյանի ատեստավորման հարցը /ղեկավար՝ Վ. Պետրոսյան, թեմա՝ «Ժամանակակից հայերենի և վրացերենի հոլովական համակարգերի տիպաբանական, գուգադրական քննություն»/:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և ուրիշներ: Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում հայցորդը շարունակել է թեմային վերաբերող նյութերի հավաքագրման աշխատանքները, ուսումնասիրել է բազմաթիվ արժեքավոր հոդվածներ /Լ. Կվաճաձե, Ա. Ութուրգախձե, Ա. Չիքոբավա/: Վերոնշյալ նյութերի զգալի մասը մշակվել և թարգմանվել է: Խմբագրման ընթացքում է գտնվում երկու գիտական հոդված, հանձնել է նաև հայցորդներին ներկայացվող պարտադիր դասընթացների քննությունները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Ասյա Դարբինյանին ատեստավորել:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Աննա Սողոմոնյանի ատեստավորման հարցը /ղեկավար՝ Վ. Պետրոսյան, թեմա՝ «Թվի կարգը գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում»/:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և ուրիշներ: Նշվեց, որ նախորդ մեկ տարվա ընթացքում հայցորդը անցել է հետևյալ դասընթացները՝ գիտության փիլիսոփայություն, գիտական հետազոտությունների մեթոդաբանություն, մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, անգլերեն, գիտական էթիկա, անձնային աճ և ինքնակարգավորում՝ վաստակելով 28 կրեդիտ: Կատարել է եռալեզու գրականության հավաքագրում: Ուսումնասիրել է հայերենին վերաբերող զգալի գրականություն: Պատրաստում է ատենախոսության թեմայով առաջին հոդվածը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Աննա Սողոմոնյանին ատեստավորել:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ենոք Գրիշկյանի՝ «Իմաստի նկարագրության խնդիրները մեքենական թարգմանության տեսության մեջ» աշխատությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը և ուրիշներ: Նշվեց, որ բ.գ.թ., ասիստենտ Ե. Գրիշկյանի՝ «Իմաստի նկարագրության խնդիրները մեքենական թարգմանության տեսության մեջ» աշխատությունն ունի գիտատեսական և գործնական անհրաժեշտ նորույթ հատկապես հայկական համակարգչային լեզվաբանության զարգացման հեռանկարում: Հեղինակին հաջողվել է համակարգված ձևով ներկայացնել առկա տեսությունները, մեքենական թարգմանության ոլորտի խնդիրները /խմբագիր՝ բ.գ.դ., պրոֆ. Լ. Խաչատրյան, գրախոսներ՝ բ.գ.թ., դոց.դոց. Ն. Դիլբարյան, Վ. Պետրոսյան/:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով գրքի անհրաժեշտությունը ինչպես մասնագետների, այնպես էլ ուսանողության շրջանում՝ աշխատությունը երաշխավորել տպագրության:

բ/ Լ Ս Ե Ց Ի Ն - «ԵՂՀ պրոֆեսոր-էմերիտուս» պատվավոր կոչմանը հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Արծրուն Աբգարի Ավագյանի թեկնածությունը ներկայացնելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Ն. Դիլբարյանը և ուրիշներ: Նշվեց, որ պրոֆեսոր, բ.գ.դ. Արծրուն Աբգարի Ավագյանը ԵՂՀ-ում աշխատում է 1968 թվականից, անցել է գիտնական- մանկավարժի, ուսումնական գործի կազմակերպիչի արգասավոր ճանապարհ՝ երկարամյա դասախոսական աշխատանքին զուգընթաց լինելով ֆակուլտետի խորհրդի քարտուղար, դեկանի տեղակալ, 2000 թվականին ընտրվել և 2003, 2008, և 2013 թթ. վերընտրվել է հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի պաշտոնում: Նա ֆակուլտետի խորհրդի նախագահն է, համալսարանի գիտական և հրատարակչական խորհուրդների անդամ, ՀՀ գրողների միության անդամ: Կրթության և գիտության ոլորտում ներդրած ավանդի և մայրենիի զարգացման համար պարգևատրվել է ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրերով: Հասարակական-քաղաքական, մարդասիրական սկզբունքների հաստատման ուղղությամբ ծավալած գործունեության համար պարգևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի և Վիլյամ Սարոյանի հուշամեդալներով, պարգևատրվել ԵՂՀ ոսկե մեդալով և ՀՀ

վարչապետի հուշամեդալով, արժանացել գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր, Բ.գ.դ. Արծրուն Աբգարի Ավագյանի թեկնածությունը ներկայացնել **«ԵՊՀ պրոֆեսոր-հմերիտուս»** պատվավոր կոչման:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**